**Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն**
**Երևանյան գրասենյակ**

*դեկտեմբերի 10, 2002 թ.*

**2002 թ.-ի ընթացքում ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից իրականացված գործունեությունը**

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակն իր գործունեությունը սկսել է 2000 թ. մարտից: Գրասենյակին տրված մանդատի շրջանակներում վերջինիս խնդիրներից է ԵԱՀԿ սկզբունքների և պարտավորությունների, ինչպես նաև ԵԱՀԿ շրջանակում Հայաստանի համագործակցության խթանումը ԵԱՀԿ բոլոր ոլորտներում: Առաջադրանքների շրջանակը ներառում է ԵԱՀԿ հաստատությունների և կառույցների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և հաստատությունների հետ համագործակցության զարգացումը, հասարակական կազմակերպությունների և կրթական կառույցների հետ կապերի միջոցով ցանցի ստեղծումը, ԵԱՀԿ մասնակցությամբ միջոցառումների կազմակերպմանն աջակցումը /ՄԽ որոշում 314/99/:

Ներկայումս Գրասենյակն ունի 6 միջազգային և 8 լրիվ դրույքով և մեկ կես դրույքով տեղացի աշխատակիցներ:

Նշված ժամանակաշրջանում Գրասենյակի գործունեության հիմնական ուղղությունները հանդիսացել են.

***Ռազմաքաղաքական ոլորտ.*** **Քաղաքական և հմուտ կառավարման** ոլորտում Գրասենյակը շարունակել է իրականացնել միջազգային հանրության համակարգումը Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարության մշակման գործընթացում: Ռազմավարության փաստաթուղթը մշակելու նպատակով Համաշխարհային բանկի կողմից տրամադրված դրամաշնորհի ներքո գործող միջազգային և տեղացի փորձագետներն իրենց վերջնական հաշվետվությունն են ներկայացրել վարչապետին ս.թ. հուլիսին: Նշված հաշվետվությունը քննարկվել է կառավարության կողմից և այս առնչությամբ Գրասենյակը տեղեկացվել է, որ կառավարությունը պատրաստվում է ավելի կարճ, նպատակային աշխատանքային ծրագիր ընդունել ս.թ. դեկտեմբերի սկզբին, որից հետո վարչապետը հանդիպում է ունենալու աշխատանքային խմբի միջազգային անդամների հետ՝ քննարկելու ծրագրի իրականացման հետագա գործունեությունը/համագործակցությունը:

Նշված ժամանակահատվածի ընթացքում Գրասենյակը սերտորեն համագործակցել է փորձագիտական խմբի հետ և միջազգային գործընկերների հետ իրականացրել է մի շարք աշխատանքային հանդիպումներ առաջարկված ռազմավարության առնչությամբ առանձնահատուկ խնդիրներ քննարկելու նպատակով: Միջազգային փորձագետները ներկայացրել են օրենքների, հաստատությունների հետ կապված կոնկրետ դեպքի ուսումնասիրություններ, որոնք կիրառվել են այլ երկրներում կոռուպցիայի դեմ պայքարում, ինչպես նաև առաջարկվել են եղանակներ նշված փորձը Հայաստանի պայմաններում համապատասխանեցնելու և կիրառելու նպատակով:

*հասցե՝ Զարոբյան փ. 60, Երևան 375009; հեռ.: (374 1) 54 58 45, 54 10 62; ֆաքս: 56 11 38*
*Էլ.փոստ.* osce@osce.am, gohar@osce.am
*http://www.osce.org/yerevan*

Բացի այդ, Գրասենյակն օժանդակել է մոտ 30 հասարակական կազմակերպությունների կոալիցիայի ստեղծմանը, որոնք մտահոգված են երկրում առկա կոռուպցիայի մակարդակից: Կոալիցիան կարևորագույն դեր կունենա օժանդակելու և վերահսկելու ռազմավարության իրականացման գործում: ԱՄՆ ՄԶԳ-ի հետ միասին Գրասենյակն աջակցել է կոռուպցիայի վերաբերյալ հասարակական կարծիքի անցկացմանն ու արդյունքների հրապարակմանը:

Գրասենյակը շարունակել է աջակցությունը/փորձագիտական օժանդակությունը **օրենսդրական փոփոխությունների** ոլորտում: 2002թ. հունվարից Եվրախորհրդի ներկայացուցչի համատեղ գործունեությունը նշված ոլորտում հնարավորություն տվեց Գրասենյակին կիսել իր բեռը, չնայած դրան շատ օրենքներ, ինչպես օրինակ Օմբուդսմանի մասին, Ընտրական, Քրեական օրենսգիրքը, սահմանադրական բարեփոխումները, ոստիկանության և ՀԿ-ի մասին օրենքները շարունակում են մնալ Գրասենյակի, ինչպես նաև Ստրասբուրգի ուշադրության կենտրոնում: Այդ իսկ պատճառով, Գրասենյակը ցանկանում է ներգրավվածություն ապահովել նշված ոլորտում: Դա իրականացնելու համար Գրասենյակը սերտորեն համագործակցում է Ազգային ժողովի հետ:

Գրասենյակը տեղական և միջազգային գործընկերների հետ համատեղ /կրկին ստանձնելով համակարգողի դեր/ մեծապես ներգրավվել է **ընտրական հարցերում:** 2002թ. և 2003թ. տեղի ունեցող տեղական, նախագահական և խորհրդարանական ընտրություններից առաջ կառավարությանը և Ազգային ժողովին է ներկայացրել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախապատրաստած համատեղ փորձագիտական եզրակացությունը ընտրական օրենսդրությունում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Սերտ աշխատանքային հարաբերություններ են հաստատվել ԿԸՀ-ի հետ: 2002թ. մայիսին տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում ընտրական օրենսգրքում առաջարկվող փոփոխությունների նախագիծը քննարկելու համար: 2003թ. ակնկալվող ընտրություններից առաջ Գրասենյակն ընդլայնել և խորացրել է իր հարաբերությունները երկրում գործող քաղաքական կուսակցությունների հետ:

ԺՀՄԻԳ-ի և միջազգային ու տեղական համայնքի ներկայացուցիչների օժանդակությամբ Գրասենյակն ներկայացրել է 2002թ. Հայաստանում տեղի ունեցած տեղական ընտրությունների քաղաքական գնահատականը: Դրա արդյունքում ընտրական գործընթացի բարելավման հետ կապված մի շարք առաջարկություններ են ներկայացվել ԿԸՀ-ին:

Գրասենյակը շարունակել է մասնակցությունը **տեղահանվածների և փախստականների հարցերով** զբաղվող աշխատանքային խմբում: Խումբը սերտորեն համագործակցում է նաև Միգրացիայի և փախստականների վարչության հետ: Գրասենյակի հիմնական հետաքրքրությունն այս ոլորտում մնում է օրենսդրական բացերը լրացնելը և օժանդակությունը Նորվեգիայի փախստականների հարցերով խորհրդին ներքին կոնֆլիկտի արդյունքում տեղահանված անձանց քարտեղագրման աշխատանքների իրականացմանը:

2002թ. ընթացքում Գրասենյակն ընդլայնել է **ռազմական/անվտանգության հարցերում** իր գործունեությունը և հանդիպումներ է անցկացրել համապատասխան նախարարությունների հետ՝ հնարավոր համագործակցության ոլորտները սահմանելու նպատակով: Միևնույն ժամանակ, Բուխարեստի նախարարների որոշմանը հարջորդել է գրասենյակի

կողմից իրականացվող լրացուցիչ ջանքերը հակահաբեկչության հարցերում օժանդակություն ցուցաբերելու գործում:

**Վարքի կանոնագրքին** և **Հակահետևակային ականներին** նվիրված կանադա-հայկական սեմինարների կազմակերպմանն օժանդակություն ցուցաբերելուց զատ Գրասենյակը նախաձեռնել է նաև սեմինար »**Կենդ փաստաթղթերի հայտնաբերում**« թեմայով, որը ներկայացվել է միջազգային փորձագետների կողմից: Գրասենյակը ներկայումս համապատասխան մարմինների հետ քննարկում է **կիբերային հանցագործություն/փողի լվացում** թեմայով սեմինար անցկացնելու հնարավորությունը: Ավելին, ԺՀՄԻԳ-ի օժանդակությամբ Գրասենյակը խոսնակ է տրամադրել 2002թ. սեպտեմբերին »Հակահաբեկչություն և մարդու իրավունքներ« թեմայով իրավաբանների կոնֆերանսին:

Գրասենյակը շարունակում է հետաքրքրությունը »**Այլընտրանքային զինվորական ծառայության մասին**« առաջարկված նոր օրենսդրության առաջընթացի վերաբերյալ, դրա առնչությամբ մեր կողմից վերահսկվում է նաև կրոնական ազատությունների և կրոնական հիմքի վրա զինվորական ծառայությունից խուսափողների խնդիրը: ԺՀՄԻԳ-ի փորձագետների խմբի կողմից ներկայացված փորձագիտական դիտողությունները 2002թ. նոյեմբերին ներկայացվել են ԱԺ համապատասխան հանձնաժողովին և նշված հարցերում համատեղ գործողություններ են նախատեսվում անցկացնել 2003թ. ընթացքում:

2002թ. հունվարին Գրասենյակը »**Տեղեկատվության ազատության օրենսդրությանը**« նվիրված սեմինար է անցկացրել: Դրան հաջորդել է լրատվամիջոցներ-կառավարություն-խորհրդարանական համատեղ աշխատանքային խմբի ստեղծումը, որի նպատակը հանդիսանում է նշված ոլորտում օրենսդրության նախագծման աշխատանքների իրականացումը: »Տեղեկատվության ազատության մասին« օրենքի նախագծի առաջին ընթերցումը ԱԺ-ում տեղի է ունեցել 2002թ. հոկտեմբերին: Այդ ժամանակահատվածում Գրասենյակը մեծապես ներգրավվել է միջազգային փորձագիտական ջանքերը համակարգելու և հանդիպումներ անցկացնելու գործում:

»Զանգվածալրատվության մասին« օրենքի նախագծի առնչությամբ Գրասենյակը շարունակել է աշխատանքը տեղական լրատվամիջոցների, Արդարադատության նախարարության և միջազգային գործընկերների հետ: Նախագիծն արդեն ներկայացվել է Ազգային ժողով: Բացի այդ, Եվրախորհրդի փորձագետները և Գրասենյակը ներգրավվել են 2001թ. ընդունված »Հեռուստատեսության և ռադիոյի հեռարձակման մասին« օրենքում փոփոխությունների կատարմանը:

Նշված օրենքի կիրարկումը հանգեցրել է երկու հեռուստաընկերությունների կողմից՝ Ա1+ և Նոյան Տապան, հեռարձակման հաճախությունները կորցնելու հետ կապված իրադարձություններին: Գրասենյակը հետևել է նշված դեպքերի, ներառյալ դատական բողոքարկումների ընթացքին և նշվածի առնչությամբ իրազեկել է Մամուլի ազատության գծով ԵԱՀԿ ներկայացուցչին: 2002թ. նոյեմբերին հայտարարվել է մեկ այլ մրցույթ և Գրասենյակը շարունակում է հետևել իրադարձություններին:

Գերմանիայի կառավարության տրամադրած ֆինանսավորման շնորհիվ Գրասենյակն աջակցել է Լրագրողների միջազգային ասոցիացիա »Հարավային Կովկաս« ստեղծմանը, որի հիմնադիր կոնֆերանսը տեղի է ունեցել

Վրաստանում, 2002թ. նոյեմբերին: Վրաստանում գործող ԵԱՀԿ առաքելությունը նույնպես օժանդակություն և աջակցություն է ցուցաբերել Ասոցիացիային: Միջազգային գրանցման ապահովումը (Ստրասբուրգում) երկար է տևել:

**Տնտեսական / շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտ.** Գրասենյակն աշխատել է և հայկական պատվիրակությանն ուղեկցել է **Բաքվի նախապատրաստական սեմինարին և Պրահայի տնտեսական ֆորումին:** Նշված հանդիպումների ընթացքում մշակվել և համաձայնեցվել են ջրի որակի և վերահսկողության վերաբերյալ ծրագրերը: Նշվածի իրականացման առնչությամբ Գրասենյակը հետևողականորեն աշխատել է գործընկեր կազմակերպությունների հետ:

2001թ. Օրհուսի կոնվենցիայի վավերացումն ապահովելու ուղղությամբ Գրասենյակի կողմից իրականացված գործունեությանը հաջորդել է **Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի** ստեղծումը: Կենտրոնը բացվել է 2002թ. մայիսին Բնապահպանության նախարարության շենքում: Գրասենյակը քաջալերել է կենտրոնի օգտագործումը պետական և ոչ պետական մարմինների և անհատ քաղաքացիների կողմից: Գրասենյակի աջակցությամբ հրապարակվել է բնապահպանական կազմակերպությունների տեղեկագիր:

**Մրցակցության քաղաքականությանը** նվիրված խոշոր սեմինար է անցկացվել սեպտեմբերին: Դա հանդիսացել է Գրասենյակի նախաձեռնությունը: Նշված միջոցառման առաջարկություններն այժմ շրջանառության մեջ են դրվել մասնակիցների միջև:

Գրասենյակն մասնակցություն է ցուցաբերում ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի կողմից »**Հայաստանում Աղքատության նվազեցման ռազմավարության**« իրականացմանը: Նշված ծրագրի շրջանակներում Գրասենյակն ուշադրությունը կենտրոնացրել է սոցիալական բարեփոխումների իրականացմանը և աղքատության կրճատմանը: Մասնավորապես, օժանդակություն է ցուցաբերվել Աշխատանքային օրենսգրքում կատարվող փոփոխություններին, տնտեսական - իրավական դաշտում մոնիտորինգին և վերականգնման/վերապատրաստման ուղղությամբ իրականացվող միջոցառումներին:

**Մարդու իրավունքների / ժողովրդավարության ոլորտ.** Գրասենյակը պատասխանատվություն է կրել ԺՀՄԻՀ-ի վեց խոշոր ծրագրերի իրականացման համար: Մարդու իրավունքների մասին իրազեկման վերաբերյալ մարդու իրավունքների թեմային նվիրված 22 հեռուստահաղորդումներ, ներառյալ 5 թոք շոուներ են նախապատրաստվել: Օգտագործելով այդ նյութերը Գրասենյակը նախաձեռնել է հասարակական իրազեկման »շրջիկ ծրագիր«, որի շրջանակներում ցուցադրվել են նշված թեմային նվիրված տեսաժապավեններ և անցկացվել են քննարկումներ գյուղական համայնքներում, համալսարաններում, դպրոցներում, բանտերում և քրեակատարողական հաստատություններում:

**ՀԿ-ի վերապատրաստման ծրագրի** արդյունքում մարդու իրավունքների մոնիտորինգի չորս զեկույցներ ներկայացվել են դատարաններում, բանակում, բարձրագույն ուսումնական հաստատություններում և քրեակատարողական համակարգում:

**Բանտային բարեփոխումների** ոլորտում ընթացքի մեջ են բանտային աշխատակիցների համար վերապատրաստման դասընթացները, որը հաջորդում է բանտային համակարգը Ներքին գործերի նախարարության համակարգից Արդարադատության համակարգ տեղափոխելու գործընթացին, քրեակատարողական հաստատություններում սոցիալ-հոգեբանական ծառայությունների իրականացումը և կալանավայրերում քաղաքացիական հասարակության մոնիտորինգի խմբի ստեղծումը:

**Քաղաքացիների գրանցման նոր համակարգի** ներդրման ծրագրի շրջանակներում նախագծվել և Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել երեք նոր օրենքների նախագծերը: UNHCR-ը ուղղակիորեն մասնակցել է ԺՀՄԻԳ-ի գրանցման ծրագրին և Գրասենյակն օժանդակում է վերջիններիս և Նորվեգիայի փախստականների խորհրդին փախստականների և ներքին տեղահանված անձանց հետ կապված հարցերում:

Շարունակվել է երիտասարդ կանանց համար նախատեսված **Կանանց իրավունքների կրթական** ծրագիրը, որը ներառում է գենդերային կրթությունը համալսարաններում և դպրոցներում, ինչպես նաև կանանց իրավունքների ուսուցանողների ուսուցումը, որը նախատեսված է շրջաններում ապրող երիտասարդ կանանց համար:

Իր մանդատի համաձայն Գրասենյակը շարունակել է հետևել Հայաստանում **մարդու իրավունքների իրավիճակին:** Վերջին ամիսների ընթացքում ուշադրության կենտրոնում է եղել կրոնական ազատությանը / կրոնական հիմքերով զինվորական ծառայությունից խուսափողների, մահապատժի խնդիրներին, ինչպես նաև բանակում և բանտային համակարգում առկա խոշտանգումներին և վատ վերաբերմունքին:

Շատ գործերի ընթացք է տրվել, որոնք Գրասենյակի ուշադրությանն են ներկայացվել **անհատական բողոքարկողների** կողմից: Այն դեպքերում, երբ Գրասենյակը դիմել է համապատասխան պետական մարմիններին մշտապես ստացել է վերջիններիս բաց և օգտակար արձագանքը: Անհատական գործերի թիվը, օմբուդսմանի ինստիտուտի բացակայության պարագայում, շարունակում է աճել: Այդ նպատակով Գրասենյակն ընդունել է կես դրույքով աշխատող իրավաբանը որն օգնում է նշված խնդիրների իրականացմանը: Գրասենյակն իրականացրել է նաև տարածաշրջանային վերապատրաստման սեմինար Հարավային Կովկասում ԵԱՀԿ այլ ներկայացուցիչների համար՝ փորձի փոխանակում իրականացնելու նպատակով:

Բրիտանիայի կառավարության կողմից տրամադրված միջոցներով անցկացվել է **ազգային փոքրամասնությունների** թեմայով սեմինար: Դրա արդյունքում մի շարք առաջարկություններ են ներկայացվել հետագա աշխատանքի վերաբերյալ, իսկ 2002թ. ընթացքում գրասենյակի օժանդակությամբ ազգային փոքրամասնությունների խնդրին նվիրված երկու ձեռնարկ է հրապարակվել:

**Կանանց և երեխաների բանտային համակարգի** բարեփոխումների ծրագիրը, որն իրականացվում է DfID-ի հետ գործընկերությամբ, ընթացքի մեջ է:

Նիդեռլանդների Հելսինկյան հանձնաժողովի հետ համագործակցությամբ հաջողությամբ իրականացվել է **իրավապահ մարմինների ժողովրդավարության** ծրագիրը:

Գրասենյակի նախաձեռնությամբ մարդու իրավունքների և ժողովրդավարության հարցերի **համակարգման հանդիպումներ** են անցկացվել ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորի համապատասխան միջազգային կազմակերպությունների և դոնորների հետ: Արդյունքում ստեղծվել են մի շարք աշխատանքային խմբեր՝ առանձնահատուկ հարցերով զբաղվելու նպատակով, օրինակ ընտրությունների, օմբուդսմանի, գենդերային և տրաֆիկինգին վերաբերող հարցեր:

*հասցե՝ Զարոբյան փ. 60, Երևան 375009; հեռ.: (374 1) 54 58 45, 54 10 62; ֆաքս: 56 11 38*
*Էլ.փոստ.* osce@osce.am, gohar@osce.am
*http://www.osce.org/yerevan*